ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 մարտի 2016 թվականի N20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ կետով, համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի <<Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին>> N 7-Ա որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Խնձորեսկ գյուղական համայնքի ղեկավարի 2016թվականի փետրվարի 3-ի ՈՒԽԳԵ-10 գրությունը, *որոշում եմ*

1. Կրթության բնագավառում ներդրած ավանդի, մատաղ սերնդի դաստիարակության գործում ունեցած վաստակի և մանկավարժական երկարամյա անբասիր աշխատանքի համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրել Խնձորեսկի նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակներ Լարիսա Գևորգյանին, Սիրվարդ Ակլունցին և Անահիտ Բալոյանին:

2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. մարտի 1
ք. Կապան